

Կազմված է 11.08.2020թ.

ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ 2 ՕՐԻՆԱԿԻՑ
ՕՐԻՆԱԿ N1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԳՐԱՆՑՎԱԾ Է

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐԿԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՍՈՑԻԱՅԻԱ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ 211.171.1156248

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ

02835204


«11» օգոստոսի 2020թ.



« 22 » դեկտեմբերի 2020թ.

ՀԻՄՆԱԴԻՐ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝


Լուսին Քերոբյան
(ստորագրողուն) (անուն, ազգանուն)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՅԻԱ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. «Հայաստանի Հանրապետության վարկային կազմակերպությունների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ ՀԿ) իրավաբանական անձանց հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:
- 1.2. ՀԿ-ի գործունեության սկզբունքներն են օրինականությունը, խտրականության բացառումը, բարեխղճությունը, անդամության կամավորությունը, անդամների շահերի ընդհանրությունը, ինքնակառավարումը և հաշվետվողականությունը:
- 1.3. ՀԿ-ն, օրենքին համապատասխան, ինքնուրույն է որոշում իր կազմակերպական կառուցվածքը, գործունեության առարկան, նպատակները և ձևերը:
- 1.4. ՀԿ-ն գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենսդրության, այլ նորմատիվ իրավական ակտերի, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:
- 1.5. ՀԿ-ն գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: ՀԿ-ն կարող է գործել արտասահմանյան պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ ստեղծելով առանձնացված ստորաբաժանումներ:
- 1.6. ՀԿ-ի լրիվ անվանումն է՝
 - հայերեն՝ «Հայաստանի Հանրապետության վարկային կազմակերպությունների ասոցիացիա» հասարակական կազմակերպություն, հապավում՝ ՀՀ ՎԿԱ,
 - ռուսերեն՝ Общественная организация “Ассоциация кредитных организации Республики Армении“, հապավում՝ АКОРА,
 - անգլերեն՝ “Association of Credit Organizations of the Republic of Armenia “ Non-Governmental Organization, հապավում՝ ACORA:
- 1.7. ՀԿ-ն իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում իր պետական գրանցման պահից, ունի հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով կլոր կնիք, պաշտոնաթղթեր, հաշվարկային, ընթացիկ և այլ հաշիվներ բանկերում՝ ինչպես դրամով, այնպես էլ տարադրամով:
- 1.8. ՀԿ-ն կարող է ունենալ խորհրդանիշ:
- 1.9. ՀԿ-ն օգտվում է ՀՀ օրենսդրությամբ հասարակական կազմակերպության համար սահմանված բոլոր իրավունքներից և կրում է համապատասխան պարտականություններ:
- 1.10. ՀԿ-ն համագործակցում է ինչպես ՀՀ պետական և ոչ պետական, արտասահմանյան և միջազգային կազմակերպությունների, այնպես էլ անհատ անձանց հետ:

- 1.11. ՀԿ-ն կարող է ունենալ միջազգային կապեր, անդամակցել միջազգային ոչ կառավարական և ոչ առևտրային կազմակերպություններին, կնքել համաձայնագրեր և պայմանագրեր օտարերկրյա ու միջազգային կազմակերպությունների հետ:
- 1.12. ՀԿ-ն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է հիմնել լրատվության միջոցներ, տեղեկատվություն տարածել իր գործունեության վերաբերյալ՝ զանգվածային լրատվության միջոցներով:
- 1.13. ՀԿ-ն իրավունք ունի իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինել իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծել առևտրային կազմակերպություն կամ դառնալ նրա մասնակից:
- 1.14. ՀԿ-ն կարող է իր նպատակներին համապատասխան՝ ունենալ շահառուներ, ինչպես նաև իր աշխատանքներում ներգրավել կամավորների:
- 1.15. ՀԿ-ի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 26/3, հեռախոս՝ 010 526694, էլ. հասցե director@acora.am:

2. ՀԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊՍԱԿԸ, ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- 2.1. ՀԿ-ի նպատակն է նպաստել ՀՀ ֆինանսավարկային համակարգի զարգացմանը՝ վարկային կազմակերպությունների ներուժը առավել ամբողջական և արդյունավետ կիրառելու միջոցով:
- 2.2. ՀԿ-ի գործունեության առարկան է՝ ներկայացնել իր անդամ վարկային կազմակերպությունների ընդհանուր խնդիրներն ու շահերը ՀՀ կենտրոնական բանկում, ՀՀ կառավարությունում, պետական և ոչ պետական այլ մարմիններում:
- 2.3. ՀԿ-ի խնդիրներն են՝
 - բացահայտել, հետազոտել ու ընդհանրացնել իր անդամ վարկային կազմակերպությունների շահերի հետ առնչվող հիմնախնդիրները, խոչընդոտներն ու ռիսկերը. համապատասխան գործողությունների նախաձեռնումը՝ դրանք լուծելու ուղղությամբ,
 - ներկայացնել ՀԿ անդամ վարկային կազմակերպությունների շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, հասարակական, միջազգային կազմակերպություններում,
 - պաշտպանել և ներկայացնել ՀԿ անդամ վարկային կազմակերպությունների շահերը ՀՀ Կենտրոնական բանկում, այդ նպատակով կազմակերպել համատեղ քննարկումներ, հանդես գալ առաջարկություններով,
 - նպաստել ՀԿ անդամների կապերի զարգացմանը և ամրապնդմանը, համակարգել ՀԿ անդամների գործունեությունը՝ համատեղ երկարաժամկետ ծրագրերի մշակման և իրականացման համար,

- մասնակցել ՀՀ-ում ֆինանսավարկային գործունեության մասին օրենսդրական և նորմատիվային ակտերի նախագծերի մշակմանը և դրանց փորձաքննությանը,
- ՀԿ անդամներին օժանդակել ֆինանսավարկային առաջավոր տեխնոլոգիաների ու մեթոդների ներդրմամբ՝ սպասարկման բարելավման և գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով,
- մշակել և իրականացնել ծրագրեր՝ կադրերի վերապատրաստման և որակավորման բարձրացման, ինչպես նաև որակավորման ու մասնագիտական համապատասխանության ստուգման ուղղությամբ,
- կազմակերպել սեմինարներ և գիտաժողովներ,
- իրականացնել ՀԿ անդամների ընհանուր շահերից բխող այլ խնդիրներ, որոնք չեն հակասում ՀՀ օրենսդրությանը և սույն Կանոնադրությանը:

3. ՀԿ ԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ, ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՌԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

- 3.1. ՀԿ անդամ կարող են դառնալ ՀՀ-ում գործող վարկային կազմակերպությունները, ինչպես նաև ցանկացած իրավաբանական անձ, որը գործունեություն է ծավալում ֆինանսական համակարգում, որն ընդունում է սույն կանոնադրությունը, իր գործունեությամբ նպաստում է ՀԿ կանոնադրական նպատակների իրագործմանը, վճարում է անդամավճար: Վարկային կազմակերպություն չհանդիսացող իրավաբանական անձանց անդամակցության հարցը լուծում է Ընդհանուր ժողովը:
- 3.2. ՀԿ անդամ դառնալու ցանկություն ունեցող իրավաբանական անձը գրավոր դիմում է ՀԿ կառավարման մարմնին՝ Նախագահին:
- 3.3. ՀԿ անդամակցության մեջ ընդհունելու հարցը լուծում է Ընդհանուր ժողովը՝ սույն Կանոնադրության հիման վրա: Քննարկմանը կարող է մասնակցել դիմող իրավաբանական անձի անունից ի պաշտոնե հանդես եկող լիազորված անձը: ՀԿ նախագահի ստորագրությամբ Ընդհանուր ժողովի որոշումը եռօրյա ժամկետում պաշտոնապես տրամադրվում է դիմողին:
- 3.4. ՀԿ անդամը ցանկացած ժամանակ ազատ է դուրս գալու ՀԿ-ից՝ իր իրավասու մարմնի որոշման հիման վրա:
- 3.5. ՀԿ անդամակցությունից հեռացումը կատարվում է Ընդհանուր ժողովի որոշմամբ հետևյալ դեպքերում՝
 - ՀԿ անդամի կողմից խախտվել է սույն Կանոնադրության դրույթները,
 - ՀԿ անդամը չի կատարել ՀԿ Ընդհանուր ժողովի և /կամ/ խորհրդի որոշումները:
- 3.6. ՀԿ անդամի անդամակցությունը դադարեցվում է հետևյալ դեպքերում՝
 - ՀԿ ադամի սնանկության դեպքում՝ դատարանի որոշումը ուժի մեջ մտնելու պահից,

- ՀԿ անդամի լուծարման դեպքում՝ լուծարման կամ լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

4. ՀԿ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. ՀԿ անդամն իրավունք ունի՝

- ՀԿ կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով ընտրել և ընտրվել ՀԿ կառավարման մարմիններում,
- մեկ ձայնի իրավունքով մասնակցել ՀԿ Ընդհանուր ժողովի և խորհրդի նիստերի աշխատանքներին: Ընդ որում՝ անդամ Կազմակերպությունների անունից ի պաշտոնե հանդես եկող անձինք առանց լիազորագրի, իսկ այլ ներկայացուցիչները՝ լիազորագրերով:
- անվճար օգտվել նրա ծառայություններից,
- ծանոթանալ ՀԿ մարմինների արձանագրություններին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները,
- վերադասության կամ դատական կարգով բողոքարկել ՀԿ մարմինների որոշումները: ՀԿ անդամի կողմից կառավարման մարմնի որոշումների բողոքարկումն իրականացվում է Ընդհանուր ժողովին համապատասխան դիմում ներկայացնելու եղանակով: Դիմումը քննարկում է Ընդհանուր ժողովը: Դիմումի քննարկումն կարող է կատարվել նաև հեռակա կարգով,
- ՀԿ-ից պահանջել տեղեկություններ, ստանալ փաստաթղթերի պատճեններ՝ ՀԿ կանոնադրության փոփոխությունների, ՀԿ մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալ նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին երեք տարիներին,
- ՀԿ ղեկավար մարմիններին ներկայացնել դիմումներ, գանգատներ և առաջարկություններ,
- սպառիչ տեղեկատվություն ստանալ ՀԿ-ի գործունեության մասին,
- դուրս գալ ՀԿ-ից,
- մասնակցել ՀԿ-ի կողմից կազմակերպված բոլոր միջոցառումներին,
- իրականացնել օրենքով կամ ՀԿ կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներ:

4.2. ՀԿ անդամը պարտավոր է՝

- կատարել ՀԿ-ի կանոնադրական պահանջները և կառավարման մարմինների որոշումները,
- բարեխղճորեն կատարել կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները,

- վճարել անդամավճար Ընդհանուր ժողովի կողմից սահմանված կարգով և չափով:

5. ՀԿ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

- 5.1. ՀԿ-ի կառավարման մարմիններն են՝ Ընդհանուր ժողովը, Խորհուրդը, (եթե Ընդհանուր ժողովի որոշմամբ այն ձևավորվում է), Նախագահը և գործադիր մարմինը՝ գործադիր տնօրենը: Խորհուրդի չձևավորման պարագայում, Խորհրդի ֆունկցիաները իր վրա է վերցնում Ընդհանուր ժողովը:
- 5.2. ՀԿ-ի գործունեության և կառավարման ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը պատկանում է ՀԿ բարձարագույն մարմնին՝ Ընդհանուր ժողովին:
- 5.3. ՀԿ-ի հերթական Ընդհանուր ժողովը գումարվում է տարին մեկ անգամ: ՀԿ-ի հերթական Ընդհանուր ժողովը հրավիրում է գործադիր տնօրենը: Ընդհանուր ժողովը հրավիրվում է անդամների համատեղ հավաքի ձևով կամ, եթե դա հնարավոր չէ, ապա հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ՝ կազմելով համապատասխան արձանագրություն:
- 5.4. Գործադիր տնօրենը որոշում է Ընդհանուր ժողովի անցկացման օրը, ժամը և տեղը, ինչպես նաև Ընդհանուր ժողովի օրակարգի նախնական տարբերակը և այդ մասին ոչ ուշ, քան 5 օր առաջ պատվիրված նամակով, կամ էլեկտրոնային եղանակով, կամ զանգվածային լրատվության միջոցներով, կամ օրենքով սահմանված այլ եղանակներով ծանուցում է ՀԿ անդամներին կամ կառույցներին:
- 5.5. ՀԿ-ի արտահերթ Ընդհանուր ժողովը հրավիրվում է գործադիր տնօրենի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ, Խորհրդի, Նախագահի, վերստուգիչ հանձնաժողովի, ՀԿ ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անձի կամ ՀԿ անդամների առնվազն 1/3-րդի պահանջով: Արտահերթ Ընդհանուր ժողովի գումարելու ժամանակի և վայրի մասին Ընդհանուր ժողովի մասնակիցները ծանուցվում են արտահերթ Ընդհանուր ժողովի անցկացնելու օրվանից առնվազն 5 օր առաջ:
- 5.6. **Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝**
 - ՀԿ-ի կանոնադրության հաստատումը, փոփոխումը, լրացումներ կատարելը և նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը,
 - ՀԿ-ի լուծարման (բացառությամբ դատարանի վճռով լուծարվելու դեպքերի) և վերակազմակերպման մասին որոշումների ընդունումը,
 - այլ իրավաբանական անձ, կամ այլ կազմակերպությունում ՀԿ-ի մասնակցության մասին որոշման ընդունումը,
 - ՀԿ կառուցվածքի հաստատումը,
 - ՀԿ իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողության դադարեցումը:
- 5.7. Ընդհանուր ժողովի իրավասության հարցերի մեջ են մտնում նաև՝

- ՀԿ խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
- ՀԿ նախագահի ընտրությունը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
- ՀԿ հաստիքացուցակի և դրույքաչափերի հաստատումը,
- ՀԿ ակտիվների արժեքի 50 տոկոսը գերազանցող գործարքների հաստատում,
- ՀԿ գործադիր տնօրենի ընտրությունը և նրա հետ կնքված պայմանագրի վաղաժամկետ լուծումը,
- ՀԿ անդամների կողմից մուտքի վճարների և անդամավճարների մուծման կարգի և չափերի հաստատումը,
- ՀԿ-ին կազմակերպությունների անդամակցության և անդամակցության դադարեցման վերաբերյալ որոշումների ընդունումը,
- ՀԿ-ի վերստուգիչ հանձնաժողովի անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
- ՀԿ-ի ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անձի հաստատումը,
- յուրաքանչյուր տարի գործադիր տնօրենի կողմից հաստատված ՀԿ-ի գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունների, և հաշվապահական հաշվեկշռի հաստատումը: Դրանց հաստատումը կատարվում է միայն վերստուգիչ հանձնաժողովի կամ արտաքին աուդիտի եզրակացության դեպքում,
- ՀԿ-ի զարգացման ծրագրերի և գործունեությունը կանոնակարգող ներքին ակտերի հաստատումը,
- ՀԿ-ի գործունեության արդյունքների մասին գործադիր տնօրենի հաշվետվության հաստատումը,
- ՀԿ-ի կողմից այլ իրավաբանական անձ ստեղծելը,
- ՀԿ մարմինների իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողությունը դադարեցնելը,
- Օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

5.8. Ընդհանուր ժողովում ՀԿ յուրաքանչյուր անդամ վարկային կազմակերպություն ունի մեկ ձայնի իրավունք: Ընդհանուր ժողովը իրավագոր է, եթե գումարվել է օրենքին և ՀԿ կանոնադրությանը համապատասխան, և ժողովին մասնակցում է ՀԿ անդամ վարկային կազմակերպությունների առնվազն երկու երրորդը: Ընդհանուր ժողովի որոշումները ընդունվում են քվեարկության իրավունք ունեցող մասնակից անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ ՀԿ լուծարմանն ու վերակազմակերպման վերաբերող հարցերի: ՀԿ-ի լուծարմանն ու վերակազմակերպման որոշումը ընդունվում է ՀԿ-ի բոլոր անդամների ձայների երեք քառորդով: Չայնի իրավունք ունեցող ՀԿ անդամ կազմակերպությունները, ժողովին ներկա չլինելու դեպքում, որոշումների ընդունման ժամանակ քվեարկել կարող են հեռակա կարգով՝ իրենց դիրքորոշումը Ընդհանուր ժողովին ներկայացնելով գրավոր կամ էլեկտրոնային նամակի տեսքով:

- 5.9. Ընդհանուր ժողովում որոշման կայացման համար բավարար ձայների բացակայության դեպքում քննարկվող հարցը օրակարգից հանվում է:
- 5.10. Ընդհանուր ժողովում հարցերի քննարկումը կարող է տեղի ունենալ միայն ՀԿ գործադիր տնօրենի պարտադիր մասնակցությամբ, բացառությամբ գործադիր տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև նրա վարձատրության պայմանների հաստատման հարցերի դեպքում: ՀԿ գործադիր տնօրենը մասնակցում է խորհրդակցական ձայնի իրավունքով:
- 5.11. Ընդհանուր ժողովում նախագահում է ՀԿ նախագահը, կամ գործադիր տնօրենը, նրանց բացակայության դեպքում՝ Ընդհանուր ժողովի որոշմամբ այլ անդամ: Ժողովի ավարտից հետո եռօրյա ժամկետում կազմվում է Ընդհանուր ժողովի արձանագրություն երկու օրինակից, որոնք ստորագրում են ժողովի նախագահողը և քարտուղարը: Ժողովի արձանագրությունները պահպանվում են 5 տարի:

ՀԿ Խորհուրդ

- 5.12. Ընդհանուր ժողովի որոշմամբ կարող է ձևավորվել ՀԿ խորհուրդ: Խորհրդի բացակայության դեպքում սույն Կանոնադրությամբ սահմանված Խորհրդի լիազորություններն իրականացնում է Ընդհանուր ժողովը:
- 5.13. Խորհուրդը իրականացնում է ՀԿ գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք սույն Կանոնադրությամբ վերապահված են Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը:
- 5.14. ՀԿ խորհուրդը ընտրվում է Ընդհանուր ժողովի կողմից՝ երեք տարի ժամկետով: Խորհուրդը ընտրվում է ՀԿ անդամ վարկային կազմակերպությունների գործադիր տնօրեններից կամ խորհրդի նախագահներից:
- 5.15. Խորհրդի քանակական կազմը սահմանվում է առնվազն երեք անդամից:
- 5.16. Խորհուրդն իր աշխատանքները իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ: Նիստերը հրավիրվում են Խորհրդի նախագահի կողմից: Արտահերթ նիստեր հրավիրվում են ՀԿ խորհրդի անդամների առնվազն երկու երրորդի, վերստուգիչ հանձնաժողովի, գործադիր տնօրենի, ՀԿ ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անձի պահանջով: Արտահերթ նիստը գումարվում է պահանջը ներկայացնելու օրվանից՝ 10 օրվա ընթացքում:
- 5.17. Խորհրդի իրավասություններն են՝
- ՀԿ գործունեության հիմնական ուղղությունների որոշումը,
 - Ընդհանուր ժողովին նրա բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերի վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը,
 - ՀԿ գործադիր տնօրենի թեկնածուի (թեկնածուների) առաջարկումը,
 - ՀԿ գործադիր տնօրենի վարձատրության չափի որոշումը,
 - ՀԿ գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքների (գործարքի կատարման պահին ՀԿ ակտիվների 25 տոկոսը գերազանցող գումարի) կնքումը,
 - ՀԿ աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը,

- սույն Կանոնադրության էությունից բխող և Ընդհանուր ժողովի կողմից տրված այլ իրավասությունների իրականացումը,
 - որոշումներ ընդունումը ՀԿ-ի առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ ստեղծելու և կանոնադրությունները հաստատելու մասին:
- 5.18. Խորհրդում յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Խորհրդի նիստը իրավասու է որոշումներ կայացնել, եթե նիստին մասնակցում է Խորհրդի անդամների առնվազն երկու երրորդը: Խորհրդի նիստերում հարցերի քննարկումը կարող է տեղի ունենալ միայն ՀԿ գործադիր տնօրենի պարտադիր մասնակցությամբ, բացառությամբ գործադիր տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև նրա վարձատրության պայմանների հաստատման հարցերի: Գործադիր տնօրենը մասնակցում է Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:
- 5.19. ՀԿ խորհրդի որոշումներն ընդունվում են մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Չայների հավասարության դեպքում քննարկվող հարցը օրակարգից հանվում է:
- 5.20. Խորհրդի նիստի գումարման մասին անդամները ծանուցվում են գրավոր կամ էլեկտրոնային ձևով՝ Խորհրդի նիստի գումարման օրվանից առնվազն 5 օր առաջ: Ծանուցումը ուղարկվում է Խորհրդի նախագահի կողմից անձամբ կամ նրա գրավոր հանձնարարությամբ՝ գործադիր տնօրենի կողմից:
- 5.21. Խորհրդի անդամները չեն վարձատրվում:
- 5.22. Խորհրդի նիստը նախագահում է ՀԿ նախագահը, նրա բացակայության դեպքում՝ Խորհրդի անդամներից տարեց անդամը: Խորհրդի նիստի ավարտից հետո եռօրյա ժամկետում կազմվում է նիստի արձանագրությունը, որը ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները:

ՀԿ-ի նախագահ

- 5.23. ՀԿ նախագահը ընտրվում է անդամ վարկային կազմակերպությունների Գործադիր տնօրեններից՝ մեկ տարի ժամկետով Ընդհանուր ժողովի կողմից, ընդ որում՝ ՀԿ նախագահի պաշտոնավարումը կարող է Ընդհանուր ժողովի որոշմամբ երկարաձգվել ևս մեկ տարով: Նախագահի ընտրության ձևը (բաց կամ փակ ընտրություն) որոշվում է Ընդհանուր ժողովի կողմից քվեարկությամբ: Նույն անձը պաշտոնավարման ժամկետի ավարտից հետո (ներառյալ երկարաձգման ժամկետը) չի կարող անմիջապես վերընտրվել որպես ՀԿ նախագահ:
- 5.24. ՀԿ նախագահի պաշտոնավարումը կարող է դադարեցվել ժամկետից շուտ հետևյալ դեպքերում.
- Դատարանի կողմից անգործունակ ճանաչվելու դեպքում,
 - Ժողովի որոշմամբ՝ քվեարկության իրավունք ունեցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ,
 - Վարկային կազմակերպության Գործադիր տնօրենի պաշտոնը լքելու դեպքում,

- Մեփական դիմումի հիման վրա:

- 5.25. ՀԿ նախագահը չի վարձատրվում: ՀԿ-ի ֆինանսական միջոցներից փոխհատուցվում կամ ֆինանսավորվում են ՀԿ նախագահի կողմից կատարված գործուղման, ներկայացուցչական և այլ ծախսերը, որոնք կապված են ՀԿ-ի հեղինակության բարձրացման և ՀԿ-ն Հայաստանի Հանրապետության տարածքում և տարածքից դուրս ներկայացնելու հետ:
- 5.26. ՀԿ նախագահը՝
- կազմակերպում և համակարգում է Խորհրդի աշխատանքները,
 - գումարում և նախագահում է Խորհրդի նիստերը,
 - կազմակերպում է Խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը,
 - ՀԿ-ի անունից գործադիր տնօրենի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր:
- 5.27. Խորհրդի բացակայության դեպքում ՀԿ նախագահի պարտականությունների մեջ մտնում են նաև՝
- արտահերթ ժողովների գումարումը, դրանց օրակարգի նախագծի հաստատումը,
 - Ընդհանուր ժողովին նրա բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերի վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը:
- 5.28. ՀԿ նախագահը իրավասու է ՀԿ-ի անունից գործել առանձ լիազորագրի , և իրավասու է մասնակցել հրապարակային քննարկումների ու բանակցությունների: Առանց Ընդհանուր ժողովի կամ Խորհրդի համապատասխան որոշման, ՀԿ նախագահը իրավասու չէ ՀԿ անունից որևէ գործարք կնքել և/կամ գործողություն կատարել:
- 5.29. Որպես ՀԿ նախագահ հանդես գալու դեպքում, ՀԿ նախագահը չի կարող մատնանշել կամ որևէ այլ կերպ հիշատակել իր կողմից ղեկավարվող վարկային կազմակերպության անվանումը: Նա պարտավոր է հանդես գալ բացառապես ՀԿ շահերից ելնելով:

ՀԿ-ի գործադիր տնօրեն

- 5.30. Գործադիր տնօրենը, ով ՀԿ գործադիր մարմինն է, ընտրվում է Ընդհանուր ժողովի կողմից չորս տարով: Նա ղեկավարում է ՀԿ-ի ընթացիկ աշխատանքներն ու գործունեությունը:
- 5.31. ՀԿ գործադիր տնօրենը՝
- կազմակերպում և համակարգում է Ընդհանուր ժողովի աշխատանքները,
 - գումարում և նախագահում է Ընդհանուր ժողովի նիստերը,
 - կազմակերպում է նիստերի արձանագրությունների վարումը,
 - նախագահում է Ընդհանուր ժողովը, ստորագրում է ժողովների արձանագրությունները, պատասխանատվություն է կրում արձանագրություններում առկա տեղեկությունների հավաստիության համար,
 - ներկայացնում է ՀԿ անդամների շահերը օրենսդիր, գործադիր և դատական մարմիններում, այդ թվում՝ ՀՀ Կենտրոնական բանկում, տեղական և միջազգային կառույցներում, կազմակերպում և համակարգում է Ընդհանուր ժողովի ու Խորհրդի աշխատանքները,

- ղեկավարում է ՀԿ-ի ընթացիկ գործունեությունը, բացառությամբ սույն Կանոնադրությամբ սահմանված՝ Ընդհանուր ժողովի և Խորհրդի իրավասությանը պատկանող հարցերի,
 - տնօրինում և կառավարում է ՀԿ-ի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում ՀԿ-ի անունից (գործարքի կատարման պահին ՀԿ ակտիվների 25 տոկոսը չգերազանցող գումարի չափով),
 - յուրաքանչյուր տարի հաստատում է ժողովի գումարմանը նախորդող տարվա ՀԿ գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները, որոնք վերստուգիչ հանձնաժողովի եզրակացության հետ միասին ներկայացվում է ժողովի հաստատմանը,
 - հաստատում է ՀԿ աշխատողների հաստիկացուցակը, տարեկան ծախսերի նախահաշիվը և դրա կատարողականի հաստատումը,
 - ներկայացնում է ՀԿ-ն Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում,
 - գործում է առանց լիազորագրի,
 - տալիս է լիազորագրեր,
 - սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,
 - Խորհրդի հաստատմանն է ներկայացնում ՀԿ-ի ներքին ակտերը,
 - սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում ՀԿ-ի աշխատակիցներին, ապահովում աշխատանքային ներքին ակտերի կատարումը,
 - հաստատում է ՀԿ-ի հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը,
 - հաստատում է ՀԿ-ի գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում նրա առանձնացված ստորաբաժանումների ներքին կարգապահական և այլ կանոնները,
 - աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,
 - բանկերում բացում է հաշիվներ,
 - իրականացնում է Ընդհանուր ժողովի և Խորհրդի կողմից տրված այլ լիազորություններ:
- 5.32. Գործադիր տնօրենը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենքներով, սույն Կանոնադրությամբ, Ընդհանուր ժողովի և Խորհրդի որոշումներով, ՀԿ-ի ներքին ակտերով, ինչպես նաև իր հետ կնքված աշխատանքային պայմանագրով:
- 5.33. Գործադիր տնօրենը հաշվետու է ՀԿ-ի ընդհանուր ժողովին և խորհրդին:

ՀԿ վերստուգիչ հանձնաժողով

- 5.34. ՀԿ-ի վերստուգիչ հանձնաժողովը ընտրվում է Ընդհանուր ժողովի կողմից՝ 3 տարի ժամկետով:
- 5.35. Վերստուգիչ հանձնաժողովի կազմը պետք է 3 անձից պակաս չլինի և ընտրված լինի միայն ՀԿ անդամ վարկային կազմակերպությունների աշխատակիցներից, բացառությամբ ՀԿ կառավարման մարմիններում ընդգրկված անձանցից: Վերստուգիչ հանձնաժողովի

նախագահին ընտրվում է հանձնաժողովի կազմից՝ հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

5.36. Վերստուգիչ հանձնաժողովը՝

- Տարին մեկ իրականացնում է ՀԿ-ի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների ստուգումը՝ հաջորդ տարվա առաջին եռամսյակի ընթացքում,
- ստուգում է ՀԿ-ի ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ՝ ցանկացած ժամանակ, Ընդհանուր ժողովի կամ Խորհրդի որոշմամբ, ինչպես նաև ՀԿ անդամների առնվազն 10 տոկոսի պահանջով,
- ստուգում է ՀԿ-ի փաստաթղթերի համապատասխանությունը օրենքներին, Կանոնադրությանը, Ընդհանուր ժողովի կամ Խորհրդի որոշումներին, ներքին ակտերին,
- իրավունք ունի պահանջել ՀԿ-ի ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, պարտադիր քննարկման ենթակա առաջարկությունները ներկայացնել ՀԿ մարմիններին, որոնք պարտավոր են 10 օրյա ժամկետում ներկայացնել գրավոր պատասխաններ,
- ստուգումների արդյունքների հիման վրա պատրաստում է հաշվետվություններ և ներկայացնում Ընդհանուր ժողովին և Խորհրդին,
- ՀԿ-ի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունների վերաբերյալ եզրակացությունը ներկայացնում է Ընդհանուր ժողովին:
- Վերստուգիչ հանձնաժողովի նիստերը գումարվում են անհրաժեշտության դեպքում՝ հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ: Հանձնաժողովը իրավասու է ընդունել որոշումներ, եթե նիստին մասնակցում են բոլոր անդամները: Վերստուգիչ հանձնաժողովի որոշումները ընդունվում են մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:
- Վերստուգիչ հանձնաժողովը իրավունք ունի պահանջել գումարել արտահերթ Ընդհանուր ժողով և/կամ Խորհրդի նիստ:
- Վերստուգիչ հանձնաժողովի անդամները չեն վարձատրվում:
- Վերստուգիչ հանձնաժողովը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, սույն Կանոնադրությամբ, ինչպես նաև Ընդհանուր ժողովի և Խորհրդի որոշումներով:

**6. ՀԿ ԳՈՒՅՔԸ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ
ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ**

6.1. ՀԿ-ն որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

- 6.2. ՀԿ-ն որպես սեփականություն կարող է ունենալ անշարժ և շարժական գույք՝ շենքեր, շինություններ, տրանսպորտայի միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք:
- 6.3. ՀԿ-ի նյութական և դրամական միջոցները գոյանում են մուտքավճարներից, անդամավճարներից, տնտեսական ընկերությունների, տեղական, օտարերկրյա և միջազգային կազմակերպությունների, անհատ քաղաքացիների կողմից ստացվող նվիրաբերություններից, այդ թվում՝ դրամաշնորհներից, ՀԿ-ի ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցներից, դրամական մուտքերը՝ պետական բյուջեից, իր ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ կազմակերպություններից ստացված միջոցներից, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:
- 6.4. ՀԿ-ին սեփականության իրավունքով կարող են պատկանել ՀՀ օրենսդրությամբ չարգելված սեփականության իրավունքի ցանկացած օբյեկտ: ՀԿ-ի միջոցները կարող են օգտագործվել կանոնադրությամբ սահմանված նպատակների ու խնդիրների իրականացման համար: ՀԿ-ի գույքը, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթը նրա անդամների միջև չի կարող բաշխվել:

7. ՀԿ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

- 7.1. ՀԿ-ն կարող է լուծարվել Ընդհանուր ժողովի կամ դատարանի որոշմամբ:
- 7.2. Ընդհանուր ժողովը կազմավորում է լուծարման հանձնաժողով և օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները: ՀԿ-ի լուծարման ավարտին լուծարման հանձնաժողովը պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո մնացած գույքը Ընդհանուր ժողովի որոշմամբ սահմանված կարգով օգտագործում է ՀԿ կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, իսկ եթե դա հնարավոր չէ, փոխանցում է պետական բյուջե:
- 7.3. ՀԿ-ն կարող է վերակազմակերպվել Ընդհանուր ժողովի որոշմամբ կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի վճռով՝ օրենքով սահմանված կարգով:

Սույն կանոնադրությունը կազմված է 11.08.2020 թ. և բաղկացած է 13 թերթից:

